ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

24 հունիսի 2011թ. **№.....**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33 և 35-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

1. Հաստատել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին ավագանու հերթական նիստին վերահաստատման ներկայացնել «Երևանի պատվավոր քաղաքացի» մեդալի, վկայականի և հաշվառման գրքի ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ **Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Լ. ԻԳԻԹՅԱՆ

Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ

Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հավելված

Երևանի ավագանու

«»..... 2011թ. հ.----- որոշման

ԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու հիմքերը, առաջարկությունների ներկայացման և քննարկման ժամկետները, պատվավոր քաղաքացու իրավունքները։
2. Երևանի քաղաքապետի առաջարկությամբ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհվում է Երևանի ավագանու որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և օտարերկրյա քաղաքացիներին, նրանց կենդանության օրոք՝ ցմահ։
3. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհվում է Երևան քաղաքի և/կամ Երևանի բնակչության զարգացմանն ու բարգավաճմանն էապես նպաստող գործունեության և ներդրած ավանդի համար։

II. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու առաջարկությունները

4. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու գրավոր առաջարկով Երևանի քաղաքապետին կարող են դիմել.
   1) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները,
   2) Երևանի ավագանու անդամների առնվազն մեկ երրորդը,
   3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք
   4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները։

5. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման ներկայացվողի փաստաթղթերի փաթեթը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) առաջարկ Երևանի քաղաքապետին, որը պետք է ընդգրկի «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման ներկայացվողի՝ Երևան քաղաքի և/կամ Երևանի բնակչության զարգացմանն ու բարգավաճմանն էապես նպաստող գործունեության և ներդրված ավանդի մասին տվյալներ,

2) լուսաբանող լրացուցիչ նյութեր,

3) պետական կամ միջազգային պարգևների, մրցանակների, կոչումների առկայության դեպքում՝ դրանք հաստատող փաստաթղթերի կրկնօրինակները,

4) թեկնածուի լուսանկարը։

III. Առաջարկությունների քննարկումը

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված սուբյեկտներից յուրաքանչյուրն ընթացիկ տարվա ընթացքում կարող է ներկայացնել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման մեկ թեկնածուի վերաբերյալ առաջարկություն։
7. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման ներկայացվողների վերաբերյալ առաջարկություններն ընդունվում են մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը։
8. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման ներկայացվողների հայտերը, ընդունման վերջնաժամկետից հետո մեկ ամսվա ընթացքում, քննարկվում են Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով)։
9. Հանձնաժողովն իր եզրակացությունը ներկայացնում է Երևանի քաղաքապետին, որն էլ այն ընդգրկում է ավագանու նիստի օրակարգ (դրական եզրակացության դեպքում) կամ մերժման պատճառների մասին (բացասական եզրակացության դեպքում) 10-օրյա ժամկետում տեղեկացնում է առաջարկության հեղինակին։

III. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման շնորհումը

10. Տարվա ընթացքում «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում կարող է շնորհվել առավելագույնը երեք քաղաքացու։
11. «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին որոշումը կայացվում է տարին մեկ անգամ՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը նախորդող՝ Երևանի ավագանու նիստում։
12. Երևանի ավագանու որոշումը, Երևանի պատվավոր քաղաքացու մեդալը և վկայականը «Էրեբունի-Երևան» տոնակատարության հանդիսավոր նիստի ընթացքում պատվավոր քաղաքացուն է հանձնում Երևանի քաղաքապետը։
13. «Երևանի պատվավոր քաղաքացի» մեդալի, վկայականի և հաշվառման գրքի ձևերը հաստատում է Երևանի ավագանին։

V. Երևանի պատվավոր քաղաքացու իրավունքները

14. Երևանի պատվավոր քաղաքացու իրավունքներն են՝
    1) ազատ մուտք Երևանի քաղաքապետարան և քաղաքապետարանի ենթակա հիմնարկ–ձեռնարկություններ /Երևանի պատվավոր քաղաքացու վկայականի ներկայացմամբ/,
    2) արտահերթ ընդունելություն Երևանի քաղաքապետի, Երևանի քաղաքապետի տեղակալների և Երևանի քաղաքապետարանի ենթակա կազմակերպությունների ղեկավարների մոտ,
    3) Երևանում գտնվող իր սեփականությունը հանդիսացող մեկ միավոր անշարժ գույքի գույքահարկի արտոնության տրամադրում (դիմումի համաձայն)։

Երևանի ավագանու որոշումներով Երևանի պատվավոր քաղաքացիների համար կարող են սահմանվել այլ արտոնություններ։

VI. Երևանի պատվավոր քաղաքացու մասին գրառումները

15. Երևանի պատվավոր քաղաքացու մասին տեղեկությունները 30-օրյա ժամկետում գրանցվում են Երևանի պատվավոր քաղաքացիների հաշվառման գրքում։
16. Երևանի պատվավոր քաղաքացիների հաշվառման գրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրվում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում։

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը նպատակ է հետապնդում կանոնակարգել այն անձանց շրջանակը, որոնք իրենց գործունեությամբ նպաստել են Երևանի զարգացմանն ու բարգավաճմանը, ինչպես նաև այդ կոչումը շնորհելու առաջարկով հանդես գալու իրավունք ունեցող կազմակերպությունները և նման առաջարկությունների քննարկման ու որոշումների ընդունման ընթացակարգը։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Լ. ԻԳԻԹՅԱՆ

Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ

Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ իրավական այլ ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Լ. ԻԳԻԹՅԱՆ

Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ

Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Լ. ԻԳԻԹՅԱՆ

Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ

Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ